ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի փետրվարի 11 N 47Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով և 19-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, Սյունիքի մարզպետի կողմից մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունը համապատասխան բնագավառներում համակարգելու և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին վերապահել մարզում իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառում՝

1) իրավական ոլորտում աշխատանքների կազմակերպման

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանին վերապահել մարզպետի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառներում՝

1) քաղաքաշինության
2) տրանսպորտի և ճանապարհաշինության
3) առողջապահության
4) սոցիալական պաշտպանության
5) հողօգտագործման
6) տնտեսական զարգացման

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանին վերապահել մարզպետի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառներում՝

1) գյուղատնտեսության
2) մշակույթի և սպորտի
3) կրթության
4) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության
5) բնապահպանության
6) տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման
7) զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության անվտանգությանն ուղղված պաշտպանական միջոցառումների կազմակերպման

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Էդգար Մարտիրոսյանին վերապահել մարզպետարանի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառներում՝

1) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման
2) քարտուղարության աշխատանքների կազմակերպման
3) անձնակազմի կառավարման

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019թ. փետրվարի 20-ի N 23-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11.02.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. փետրվարի 11
ք. Կապան